47. ԿՈՏԻ ԽԵՔԱԹ

Կէլնի մարթու մեկմ, կէլնի, ասենքյ, կէրթա չարսուն-բազար: Ուր տուն զատ կէլնի բազարից: Մեյ խատ տտում մը կկնտնի ճամխու խետ, կառնի ուր տտում, կտառնա ետ, էլ չէրթա բազար: Կուգյն տուն: Կասի. - Վոլա, կնի՛կ, էսա տտում իփի ուտեմ, նոր էրթնմ բազար:

Կնիկ տտում կիփի: Մարթն կուտի, կէլնի կէրթն: Կէրթն էնտեղ որ տտում կնդեր ի, կնստի ճուր թափելու, էնքան կզոռի՝ չիկանա ճուր թափե, մեյ ժամ ըսկուն կնստի, կտիսնա, որ մեյ հատ սև կոտմ կթռնի ուրնից: Կէլնի ուր կոտ կխորի, կէլնի կինի ճնմբնխ, կես սնհնթվա ճնմբնխ կքյելի կտիսնա ծենմ կուգյն էտա մարթու իտնեն:

Մարթ կիրիշկի որ էտ կոտ կլորվելեն կկանչի, կասի. - Հայրի՛կ, կայնի չում ես գյնմ խասնիմ քյե: Մարթ կիրիշկի, կզնրմանա: Կկայնի չում կոտ կուգյն:

Կոտ կասի. - Հայրի՛կ, դեոր կէրթնս, ես էլ կուգյնմ խետ քյե:

Մարթ կպռնի էտ տեղ չորս գյուզ գյետին կփորի, կոտ կխորի մեչ էտա փոսին, կթողնի ուր ճնմբնխ կպռնի կէրթն:

Կես սնհնթվա ճնմբնխ էլ կէրթն, կտիսնա իտև կոտ կլոր-մլոր կվնզի: Մարթն կզնրմանա, կասի. - Տե՛ր աստված, էսա ի՞նչ պան էր էկավ իմ գյլեոխ: Էտ տեղ կառնի կոտ, ետ կտառնա կիգյա տուն, էլ չի կանա էրթն բազար:

Կնգան կասի. - Կնիկ, աստված էսօր մե մեկ խատ տղա իտուր:

Կնիկ կասի. - Իտուր, իտուր, աստծու տալիք ի:

Էտա կոտ կմնա, կճիչանա մինչև տաս-տասէրկու տարեկան կէլնի: Օրմ ուր խոր կասի. - Հայրի՛կ, զիկ պիտի փսակես:

Խեր կասի. - Տղա՛, վի՞ր աղչիկ կուզիս:

Կոտ կասի. - Թակավորու աղչիկ կուզեմ:

Կասի. - Տնավե՛ր, ես որ էրթնմ ընոնց տուն, խաց, միս կպիրեն տան իմ ծեռ, կճնմխեն, ես կանամ ընոնց աղչի՞կն ուզե:

Լաճն կասի խոր. - Խաց, միս, որ կպիրեն, առ տուր մեչ պիրողի գյլխուն: Կնն էլի վեր, ասա՝ թակավոր ապրած կենաս, իկիր իմ խնամաթոր:

Էտա մարթն ի կէլնի կէրթն թակավորու տուն: Խաց, միս, որ կպիրեն, տղի ասածի պես, կառնի կուտա մեչ գյլխուն, կէրթն վեր, կասի.

- Թակավոր ապրած կենաս, իկիր եմ խնամաթոր:

Թակավոր աթոռը կտնի էնտեղ, էտ մարթ կնստի, կխարցուցի մարթուց, կասի, թե.

- Դու ի՞նչխ կանաս իմ աղջիկ ուզե:

Էտ մարթ կասի. - Խա՛, ես իկիր եմ քո աղջիկ ուզող, համ պիտի ուզեմ էլ:

Թակավոր էլմ էլ խետ էտա մարթուն խանբար կուտա, կասի. - Խա՛, զիկ իրեք պան կա, թե որ պատրաստեցիր, ես իմ աղջիկ կուտամ քյո լաճուն, թե որ չպատրաստիցիր, քյո վիզն էլ, քյո լաճուն էլ մեյ տեղ պիտի զարկեմ:

Կասի. - Շատ լավ, ասա, խենքյ քու ուզած պաներ ի՞նչ ի:

Թակավորն կասի. - Մեյն կուզեմ մեկ ոսկի լագան, ոսկի տաժին, մեկ խատ էլ ոսկե աղվես մեյտեղ պիրես, քյառսուն խատ աղջիկ, քյառսուն խատ լաճ, քյառսուն էլ իրարու նմշից մեյտեղ կուզիմ: Իմ տոնից չում քյո տուտ խալի կուզեմ փովի, իմ տոնից չում քյո տուտ մեշա կուզիմ էլնի, որ արև չէլնի վեր իմ աղջկան, չում քյու տուն գյա:

Էտ մարթ կինի մտածման մեչ, կասի. «Քյառսուն ոճիլ չկա վերես, ոսկի տաժի, աղվես, ինոր ուզած պաներ ես որտե՞ղեն պիրեմ»:

Կուգյա լաճուն էսպես կպատմի, լաճ կասի. - Հայրի՛կ, տյու քյնի, աստված ողորմած ի:

Լաճու խեր առատուն կէլնի, կիրիշկի, կտիսնա, որ թակավորու ուզած ի՞նչ էր՝ ամբողջ կպատրաստվի էդ մեկ կիշերվա մեչ:

Էտ խայ համա կէլնի պոպիկ, ուրախթնով կվազի վեր խալիներաց, մեռշի մեչեն կէրթա, կասի. - Թակավո՛ր, էլի վեր, իմ խարս խան:

Թակավոր նոր քյնուց կէլնի վեր, մեկ խատ կիրիշկի կտիսնա, որ ուր ուզած ամբողջ պատրաստվեր ի, կմտածի, կասի. - Վա՛յ, ես թակավոր մի չկարողացա էսա պանն անի:

Թակավոր կասի էտ մարթուն. - Կնա՛, քո տղեն պե, աղջիկ առ կնա՛:

Մարթն կտանոնա կուգյա տեխ, տղեն կառնի, կէրթա՛:

Թակավոր կտեսնա, որ մեյ խատ կոտ մի: Աղջիկն էլ, որ կտեսնա, աղջիկն էլ կզանրմանա, կասի. - Աստվա՛ծ, ես ի՞նչխ անեմ էսա կոտի խետ:

Կոտ կինի աղջկա դեմ, կկլորվի կէրթա՛, կառնի կէրթա՛ ուր տուն, ուր խարսնիս կանի, մինչև էնօր որ կմեյտեղվին:

Կոտն կասի. - Աղչի՛կ, արե պաուկի:

Աղջիկ կասի կոտին. - Տնավե՛ր, ոչ ծեռ ունես, ո՛չ ոտ ունես, ոչ գլոխ ունես, ես խետ քյե ի՞նչ անեմ:

Կոտն կասի. - Տյու արե պաուկի, աստվածն ողորմած ի: Աղջիկն կէլնի ըսկուն սիրտն իրանր տալով կպաուկի, կտիսնա, որ էտ կոտ կպանցվի, մեչեն խուռնի խրեղեն, ջանեղմ կելնի տյուս, որ մարթ չկիյմշի թամաշա անի:

Աղչկա իրիկ, որ կոտից կէլնի տյոա, կպատմի աղջկան, կասի, թե. - Վաղ ես կէրթանմ ծիավոր կխաղամ, բայց չէլնի քո մորն ասիս՝ ինա իմ մարթն ի, - կասի, - որ տյու ասիցիր՝ էլ անկարելի պանն ի, տու զի չես կանա կնդնե:

Էտպես կասի, կէրթա՛:

Օրմ աղչկա մեր կէլնի կասի. - Էրթանմ խեմ էտ կոտ ի՞նչ ի արե խետ իմ աղջկան, իմ աղջկա սրտո՞վն ի: Մերն կէլնի կուգյա մոտ աղջիկ: Աղջկան կասի. - Աղջիկ, քո մարթն ի՞նչխ ի:

Աղջիկ կասի. - Մայրի՛կ, ինչխ որ տիսիր ես, էնպես ի, գյեռ սև կոտմ ի էնտեղ:

Աղջկան մեր աղաճանք կինի, կասի. - Բալա՛, զի դողրի ասա, խա ես չե՞մ էրթա ուրիշին ասե:

Աղջիկն էլ էնտեղ պարտավորված կասի. - Վոլա՛, էսպես խուռնի խրեղեն երիտասարթմ ի, որ մարթ չկիմիշի իրիշկա:

Որ աղջիկ էտպես կասի, էն տեղեն էրթսից կէլնի խավքյմ, կուգն տակ, զոքնչի ծեռ կպաքի, աղջկան կասի. - Պողվտե գավազան, պողվտե սոլ խայնես, յոթ տարի ֆոաս, զիկ չկանաս կնդնես:

Կթոնի, կէրթն:

Նոր էն աղջիկ կնստի կուլն, մոր կասի. - Էսա դու ի՞նչ էր խանիր իմ գլխ, էլ ես Միրզա-Մայմադ* չեմ կանա կնդնե:

Միրզա-Մայմադ կթոդնի կէրթն: Կէրթն ուր իրեքյ խատ մորքյուր կէլնի, իրեքն էլ մարթակեր պառսավ ին:

Միրզա-Մայմադի կնիկ կէլնի վեր, կէրթն մոտ դարբին, ուր խամար սոլ, գավազան, կուտա շինել, կէլնի կինի ճամբանխ:

Ցոթ տսարի կֆոա, Միրզա-Մայմադին չի կրնա կնդնե, սոլեր կծայվին, կէլնեն դողի պես, կինեն ոտներ, գավազան կմաշի, կուգն չում մոտ ծեռ: Աղջիկ կէրթա մե հատ ծաւոի տակ կպաւոկի, կքյնի, կտիսնա, որ սիրմեղ էնդիհեն կժկժալեն կուգն, կուզի որ էդ կնգան ուտի էտտեղ:

Խավքյու ծաքյեր կէրթան դեմ, կասին. - Մայրի՛կ, աստված կսիրես, ըսորից խարցուր, թե էս ի՞նչ կնիկ ի, որ իկե ըստեղ պառկե:

Մեր ծագերաւց կասի. - Եթե էն կնիկ այեղ էլնի, իմ խոսքեր պիտի լսնա: Կնիկն մեչ քուն, մեչ զարթուն կէլնի: Էդ խավքյ կասի ուր ծաքյերաց. - Էսա Միրզա-Մայմադի կնիկն ի, որ իկե ինգյե էսա տեղ, - խոսքյն կասի. - Թող էլնի վեր, էրթն քիչմ ցածրանա, էնտեղ մե հատ քյարմ կա, էտ քյարի տոռան վերեն մե խատ ճաղցի քյար կա, էն ճաղցի քյար պանա, կմտնի տոռան մեչ, Միրզա-Մայմադ էնտեղն ի:

Կնիկ, որ էտ խոսքյերն կլսի, կէլնի վեր, էտ խավքյի ոտ կպաքյի, կէլնի կէրթն խավքյու ասած տեղ: Տյուռ կպանն, կէրթն կմտնի ներս: Միրզա-Մայմադին կտիսնա:

Միրզա-Մայմադ կասի. - Տնավե՛ր, ինչի՞ էկար էստեղ, մորքյուրներս գյան, քյո ճիչ պրտյում քյո պստիկ ականջ կթողնա:

Միրզա-Մայմադ կէլնի վեր, էտտեղ թորվա կուշտ փոսմ կփորի, կնիկ կմտուցի էտ փոսի մեչ, փետ կթանի վեր փոսին, տեղ կթանի վիրեն, կնստի, մինչև իրիկուն մորքյրներ կուգանն:

Միրզա-Մայմադին կխարցուցին, կասին. - Չէլնի՞ քյո տերն իկե մոտ քյե:

Միրզա-Մայմադ պատասխան կուտա ինոր, կասի. - Մորքյու՛ր, վո՞վ կիտի էսա էլավ յոթ տարի կա, որ ես ինորից ծեռ եմ քյանշե, կարելի ի որ մկա մեռեր ի էլ:

Պստիկ մորքյուրն կասի. - Միրզա-Մայմադ, մարթ-մարթախոտ կուգյն:

Միրզա-Մայմադ կասի. - Մորքյու՛ր, սարեն տյու կուգյնս, ծորեն տյու կուգյնս մարթ-մարթախոտ քեզնից կուգյն:

Մորքյուրներ Միրզա-Մայմադին կավատան, կէլնեն կքնեն:

Էնօր որ կքնեն՝ յոթն օր պիտի քնեն:

Միրզա-Մայմադ էնօր կէլնի վեր, կիշեր քամու ծին կքյանշի, կնիկ կխեծուցի, մեկ հայբու ոսկի կառնի խետ ուր, կքշի ուր ճամբանխ կէրթն:

Ցոթն օր ճամբանխ կէրթն: Էտ մորքյուրներ յոթն օրից յետո քյնուց կակխեն:

---

* Կոտի միջից դուրս եկած երիտասարդի անունն է (Ծ.Բ.):

Ճոչ մորքուր պստիկ քյուրոչ կասի. - Իմ Միրզա-Մայմադին որ կխասնես, ծեն չի տաս: Բայց ընոր կնգյա մոտեն լոխմամ կտրես պիրես:

Պստիկ մորքյուր կէլնի կինի ճամբախ: Միրզա-Մայմադ էտ յոթն օր որ կնացե, մեյ սահաթ կխասնի:

Միրզա-Մայմադ կասի կնգյան. - Իրիշկա խենքյ մորքյուր չէկպ՞վ:

Կնիկ կիրիշկի, կտիսնա. կասի. - Միրզա-Մայմադ, ըսկուն կուգյն, որ հա՛, հա՛յի մե որ պոնի:

Միրզա-Մայմադ կասի. - Տյու էլի ճեաղաց, ես էլնեմ ճեաղացպան:

Կնիկ կանի ճեաղաց, ինքյ կէլնի ճեաղցպան:

Մորքյուր կուգյն կխասնի. կասի. - Ախպե՛ր, տյու մարթ չե՞ս տիսե:

Միրզա-Մայմադ կասի. - Մորքու՛ր.

Տեր-Սախակու ճաղացն էս ի,
Թեվի ալրի խետ կէս ի,
Ջան կուզի էս ի,
Ջան չուզե էս ի:

Մորքյուր կթողնա էտ կտառնա, կուգա տուն: Ճոչ քյվոր կխառցուցե. - Տյու մարթ չտեսա՞ր:

Կասի. - Խա՛, ես տեսա, ճաղցպանմ, ես քանի որ խարցուցի՝ զիկ էսպես ասաց:

Ճոչ քյոր կասի. - Քյո աչքեր քյեռոնա, թող տյու էն ալրից փշուրմ պիրիր զիկ խամար:

Կէլնի էտա պստկի ճոչն կճամխի:

Գյինա Միրզա-Մայմադ կասի. - Կնի՛կ, իրիշկա մեր իտև, տե մարթ չկա՞ մեր իտև:

Կնիկ կտիսնա, կասի. - Վոլա՛, մեչ երկինք, մեչ կետինք կուգյն:

Կասի. - Տյու էլի բոստան, ես էլնիմ՞ բոստնջի:

Մորքյուր կուգյն, կխասնի, կասի. - Ախպեր, տյու մարթ չիս տիսե՞:

Կասի. - Մորքյու՛ր, էնա խասեր ի՝ կքյանդեմ, էնա անխասելի կճրեմ: Քանի որ կասի. ըսկուն պատասխան կուտա: Նորեն էն էլ ետ կտառնա:

Կէրթն կխասնի քյուրոջ, կասի. - Տյու ի՞նչ տեսար:

Կասի. - Կնացի մարթմ տեսա, բոստնջի եէր: Քյանի որ ես ասի, էն իսա պատասխան իտուր՝ Մորքյուր, էսա որ խասեր ի՝ կքանդիմ. էնա որ անխասելի՝ կճրեմ:

Ճոչ քյոր կասի օրթանջի քրոչ՝ թող տու անխասնել կոեմ, պերեր:

Կէլնի ճիչ քյեոր ինքն կէրթն, էրկու խատ ճաղցի քյար կկախի ուր թիվքյերաց, էրկու խատ էլ կկախի ոտքյերաց, աչ ծիծ կթնալի վեր ծնխ թիվին, ծնխ ծիծ կթնալի վեր աջ թիվին: Կէլնի կէրթն:

Միրզա-Մայմադ կասի. - Կնի՛կ, մեյ խատ իրիշկա իտև, տե՛ս իմ ճոչ մորքյուր չէկավ, որ գյն՝ մե էրկսիս էլ կսպանի:

Կնիկ կասի. - Վոլա՛, մեյ խատ կուգյն, կետնի խետ ջեորեով կէրևա:

Կասի կնգյանն. - Մեր ծին անենքյ ծառ, տյու էլի ճստի վեր ծառին, ես էլնեմ օց, փաթթվիմ ծառի պյուլՀր:

Ինոնքյ էնպես կանեն, մորքյուր կուգյն կխասնի: Կուգյն կխասնի, որ զինք թալի կնիկ ծառից պիրի տակ:

Միրզա-Մայմադ գյլոխ կթալի մորքրոչ պերնի դեմ: Մորքյուր կասի. - Միրզա-

Մայմադ, արևուդ մեռնեմ, ասղի տեղ արա: Ի՞նչ մյուքյում կանի, Միրզա-Մայմադ չթողնա: Մորքյուր աֆքեարլամիշ կէլնի, զինքյ կթալի, էլ չի կաւնա կնիկ պոնե. կփրթնի կինի տակ, էտ ճաղցի քյարերու մեչ կէլնի խազար պրտուճ:

Նորեն Միրզա-Մայմադ կնկան կէճցի տակ, ծառն կանի ծի, կխեցնի կէրթա ուր տուն:

Ցոթն օր, յոթ կիշեր խարսնիս կանի: Ինոնքյ խասան ինոնց մուրազին, տյուն էլ խասնես քյու մուրազին:

Էրկնուց իրեք խնձոր կինի. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ էլ՝ գրողին: